և գեղջկանց»[12], կամ թե «ռամիկ հետևակք»[13]։ Աշխարհաժողովները կազմվում էին հատկապես այն ժամանակ, երբ արտաքին վտանգը դառնում էր սպառնալից։ Նրա մեջ մտնող հետևակ զորքը կազմվում էր ռամիկներից, քաղաքային արհեստավոր դասից և գեղջուկ-շինականներից։

Կիլիկյան Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները ոչ միայն ստիպում էին զենքի տակ պահել հսկայական ռազմական ուժեր (որոնց թիվը պատերազմի ժամանակ տատանվում էր 80.000—100.000)[14], այլև կատարելագործել ռազմական տեխնիկան, կառուցել բերդեր և ամրոցներ[15], պատրաստել և վարժեցնել ձիավորներ, աղեղնավորներ, շարխողներ, սակրավորներ»[16] և հատուկ անձնակազմ, որոնցից հայտնի են զինվորական բժիշկները[17] և բեռնակիրները[18] բանակին մատակարարող տրանսպորտի անձնակազմը։

Սակայն բանակի հիմնական կորիզը «հայոց հեծյալն» էր, որը, ինչպես ասացինք, կազմված էր հեծելվորներից կամ ձիավորներից։

Ինչպես վերևում տեսանք, ձիավոր և հեծելվոր տերմինները, գործ էր ածվել Կիլիկիայի հայոց հեծյալում ծառայող ազատների համար[19]։

Հայկազյան նոր բառարանում ձիավոր բառի նշանակությունը տրված է այսպես. «ձիավոր որ ունի զնախապետություն ինչի զինվորական կարգի որպիսին են ազատ և մեծազգի զինվորքն որքն աստիճանաւ ելանեն ի զանազան կարգս»[20]։

Բացի ձիավոր կամ հեծելվոր տերմիններից Կիլիկիայում ազատների դասին պատկանող ձիավորները կոչվել են նաև ձիավարժներ[21], իսկ օտար աղբյուրներում՝ chevalier բառով, որը ասպետի համազոր ֆրանսիական տերմին է[22]։

Խաչակիր ասպետների օրինակով սահմանվել է ձիավորի աստիճան, որին հասնելու համար զինվորականը պետք է հրապարակայնորեն քննություն հանձներ ձիավարժությունից՝ նիզակի գործածությունից, նետաձգությունից և ասպետ դառնալու համար անհրաժեշտ բոլոր գիտելիքներից և ունակություններից և ապա հատուկ ձիավարեցման ծիսակատարությունից հետո ստանում էր ձիավորի, ձիավարժի կամ ասպետի կոչում։

Նոր Հայկազյան բառարանում և Աճառյանի Արմատական բառարանում «ասպետ» բառին վերագրված է իտալերեն «կավալեր», իսկ հայերեն՝ «ձիավոր ազնվական», «հեծյալ իշխանավոր» նշանակությունը[23]։ Էդ. Դյուլորիեն ասպետ բառը դնում է Oasp, ձի իրանական փոխառությունից[24]։ Ակադ. Հ. Մա-

---

12 «Հանդէս Ամսօրեայ», 1954, № 1, էջ 68։

13 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 234, 245։

14 Նույն տեղում, էջ 231, Վենետիկ։ Documents Arméniens, T. I, p. 661.

15 Смбат Спарапет, Судебник, стр. 14.

16 Documents Arméniens, T. I, p. 661.

17 «Սմբատ Սպարապետի տարեգիրք», 1956, էջ 243։

18 Նույն տեղում, էջ 239։

19 Смбат Спарапет, Судебник, стр. 82—83.

20 Հայկազյան Նոր Բառգիրք։

21 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 441։

22 Dulaurier Ed., Journal Asiatique, 1861, № 18, p. 291.

23 Հ. Աճառյան, Հայ արմատական բառարան, հ. 1, էջ 557—558։

24 Ed. Dulaurier, Journal Asiatique, 1861, № 8, p. 291.